

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՂ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Սույն մեթոդաբանությունը հանդես է գալիս որպես Հայաստանի Հանրապետությունում պետության կողմից փոխհատուցվող բժշկական ծառայությունների գների հաշվարկման միասնական մեթոդական մոտեցում:
- 1.2. Բժշկական ծառայությունների գների հաշվարկումն իրականացվում է միավոր ծառայության ինքնարժեքի հաշվարկման միջոցով:
- 1.3. Բժշկական ծառայությունների ինքնարժեքի հաշվարկումն ընդգրկում է հիվանդության/վիճակի վարումը, որպես համալիր բժշկական ծառայություն, որը կարող է հանդես գալ առանձին պարզ ծառայության կամ բարդ մի քանի պարզ ծառայությունների, տեսքով:

2. ՍՈՒՅՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 2.1. Հիմնական բժշկական ստորաբանումներ - բաժանմունքները, կաբինետները, որտեղ այցելուին/հիվանդին տրամադրվում են բժշկական ծառայություններ, իրականացվում են բուժական-ախտորոշիչ և կանխարգելիչ միջամտություններ (հիվանդանոցի պրոֆիլային բաժանմունքներ, հարկլինիկական բաժանմունքներ, ԱԱՊ կաբինետներ և ախտորոշիչ կաբինետներ կամ կենտրոններ):
- 2.2. Օժանդակ ստորաբաժանումներ - հիմնական ստորաբաժանումների գործունեությունը ապահովող բաժին, վարչություն, տնտեսական ստորաբաժանումներ, կադրային և ֆինանսական ծառայություններ, դեղատուն, ախտահանում, գրանցման բաժին, լվացքատուն և այլ տնտեսական ծառայություններ:

- 2.3. Ուղղակի ծախսեր - տվյալ ծառայության մատուցման գործընթացի հետ անմիջականորեն կապված և ամբողջովին տվյալ ծառայությանը վերագրվող ծախսեր, որոնք ներառում են աշխատուժի, դեղորայքի, բժշկական նյութերի և պարագաների ծախսերը, փափուկ գույքի մաշվածությունը, բժշկական հիմնական միջոցների (սարքավորումների և գործիքների) և գույքի ամորտիզացիան և տեխնիկական սպասարկման ծախսերը,
- 2.4. Անուղղակի (վերադիր) ծախսեր - բժշկական գործունեության կազմակերպման, կառավարման, ինչպես նաև բուժօգնության իրականացման նպատակով կատարվող ծախսեր, որոնք հնարավոր չէ ուղղակիորեն վերագրել բուժօգնության առանձին ծառայությանը:
- 2.5. Ծառայության գնի հաշվարկ - մեկ միավոր ծառայության ծախսն է ըստ մեկ պարզ ծառայության կամ մեկ բուժված հիվանդի՝ ըստ առանձին ախտորոշման կամ ախտորոշումների խմբի, մեկ հաճախման, մեկ մահճակալ-օրվա, ստացիոնարում գտնվելու մեկ օրվա և այլն:
- 2.6. Աշխատուժի ծախս - ներառում է ծառայությունը իրականացնող բուժանձնակազմի աշխատավարձը, որը օրենքով, իրավական այլ ակտերով սահմանված կամ աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարելու դիմաց աշխատողին վճարվող հատուցումն է:
- 2.7. Հիմնական աշխատավարձ - օրենքով, այլ նորմատիվ իրավական ակտով, աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարելու համար սահմանված վարձատրության չափն է (ամսական կամ ժամային դրույքաչափը, գործավարձ), ինչպես նաև առողջության համար վնասակար (կամ առավել վնասակար) պայմաններում աշխատավարձի հավելումները, ամենամյա նվազագույն և լրացուցիչ արձակուրդի վճարները, վարչական հարցերի, աշխատանքային խորհրդատվությունների, կարճատև ընդմիջումների, վերապատրաստումների իրականացման համար նախատեսված աշխատաժամանակի ծախսերը:
- 2.8. Լրացուցիչ աշխատավարձ - սահմանված հիմնական աշխատավարձի նկատմամբ հաշվարկվող հավելումներն են, որոնք ընդգրկում են հերթապահության, գիշերային ժամերին և տոնական օրերին աշխատանքի համար վարձատրությունը:

3. Ուղղակի ծախսերի հաշվարկը

- 3.1. Բժշկական ծառայության ուղղակի ծախսերը հաշվարկվում են նորմատիվային (ստանդարտացված) ծախսերի գնահատման մեթոդով:
- 3.2. Ուղղակի ծախսերի հաշվարկը հիմնվում է հիմնական ուղղակի ծախսերի նորմերի և նորմատիվների վրա, որը կապված է երկու խումբ մեծություններից.
 - 3.2.1. ծառայության յուրաքանչյուր միավորի համար պահանջվող ռեսուրսների չափման ֆիզիկական ցուցանիշից (աշխատուժի տեսակ, նյութերի, դեղորայքի, պարագաների տեսակ, բժշկական սարքավորման, գործիքի տեսակ) և յուրաքանչյուր միավորի համար պահանջվող նյութերի, դեղորայքի և պարագաների քանակից ու դրանց տրամադրման տևողությունից,
 - 3.2.2. յուրաքանչյուր միավորի համար աշխատավարձի չափը և նյութերի, դեղորայքի, պարագաների և սարքավորումների ու գործիքների գները:
- 3.3. Մեկ միավոր ծառայության ուղղակի ծախսերի ($\Sigma_{\text{ու}}$) հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևի միջոցով.

$$\Sigma_{\text{ու}} = \text{Ա}_\delta + \text{Սամ.} + \text{Դեղ, նյութ} + \text{Լ}_\sigma$$

Ա_δ ՝ մեկ միավոր ծառայության աշխատուժի ծախսն է,

Սամ. ՝ բժշկական հիմնական միջոցների ամորտիզացիա և նորոգման ու տեխնիկական սպասարկման ծախսերն են,

Դեղ, նյութ ՝ միավոր ծառայության դեղորայքի և նյութերի, պարագաների ծախսն է,

Լ_σ ՝ միավոր ծառայության լաբորատոր-գործիքային ակտորոշիչ հետազոտությունների ծախսն է:

4. Աշխատուժի ծախսի հաշվարկը

- 4.1. Միավոր ծառայության աշխատուժի ծախսը հաշվարկելու համար կիրառվում են հետևյալ ցուցանիշները.
 - 4.1.1. աշխատաժամանակի տարեկան ֆոնդը աշխատողների յուրաքանչյուր կատեգորիայի համար,
 - 4.1.2. յուրաքանչյուր ծառայության համար աշխատաժամանակի ծախսը՝ ըստ աշխատողների առանձին կատեգորիաների,
 - 4.1.3. մահճակալ-օրերի տարեկան պլանային թիվը,

- 4.1.4. մահճակալների սպասարկման նորմատիվները ըստ աշխատողների առանձին կատեգորիաների
- 4.1.5. տարեկան նվազագույն և լրացուցիչ արձակուրդային օրերի թիվը աշխատողների յուրաքանչյուր կատեգորիայի համար:
- 4.2. Բուժանձնակազմի աշխատուժի ծախսերը ներառում են անմիջականորեն բժշկական ծառայության գործընթացում զբաղված աշխատողների հետևյալ կատեգորիաների հիմնական և լրացուցիչ աշխատավարձերը.
 - 4.2.1. ավագ բուժանձնակազմ (բժիշկներ, բժիշկ-լաբորանտ),
 - 4.2.2. միջին բուժանձնակազմ (բուժքույր, լաբորանտ),
 - 4.2.3. կրտսեր բուժանձնակազմ (սանիտար):
- 4.3. Բժշկական անձնակազմի հիմնական աշխատավարձը հաշվարկելու համար անհրաժեշտ են հետևյալ ցուցանիշները.
 - 4.3.1. Առողջապահության նախարարության կողմից հաստատված նորմատիվային աշխատավարձերի չափերը կամ ընտրանքային սկզբունքով որոշակի բժշկական կենտրոնների համապատասխան բաժանմունքների (ստորաբաժանումների) բուժանձնակազմի աշխատավարձի փաստացի ցուցանիշները/կամ ազգային վիճակագրության կոմիտեի կողմից հրապարակված միջին աշխատավարձի չափը:
 - 4.3.2. Ամենամյա նվազագույն և լրացուցիչ արձակուրդի վճարները:
 - 4.3.3. Օրենսդրությամբ սահմանված աշխատավարձի հավելումները այն բժշկական անձնակազմի համար, որոնք աշխատում են առողջության համար վնասակար (կամ առավել վնասակար) պայմաններում:
 - 4.3.4. Վարչական հարցերի, աշխատանքային խորհրդատվությունների, կարճատև ընդմիջումների, վերապատրաստումների իրականացման համար նախատեսված աշխատաժամանակի ծախսերը:
 - 4.3.5. Հիմնական աշխատավարձը հաշվարկվում է հետևյալ բանաձևի միջոցով.

$$Ա \text{ հիմն} = \sum_{(1-n)} \sigma_u * \psi_q * U_{\text{տրմ}1+n} \text{ որտեղ}$$

Ա հիմն՝ հիմնական աշխատավարձի տարեկան գումարն է,
 σ_u ՝ աշխատողի յուրաքանչյուր կատեգորիայի համար տարվա 12 ամիսների և նվազագույն ու լրացուցիչ արձակուրդի (վերաձված ամսի) հանրագումարն է (12+Արձակ.օր/21),

$U_{\text{որմ}1+n}$ – աշխատակիցների առանձին կատեգորիաների համար սահմանված աշխատավարձի նորմատիվային մեծությունն է,

Վզ՝ յուրաքանչյուր աշխատողի կատեգորիայի համար սահմանված վնասակարության գործակիցն է:

- 4.4. Բժշկական անձնակազմի լրացուցիչ աշխատավարձը հաշվարկելու համար անհրաժեշտ են հետևյալ ցուցանիշները.
 - 4.4.1. հերթապահության համար վարձատրությունը՝ ելնելով հերթապահության ժամերից և մեկ ժամի վարձատրության դրույքաչափից:
 - 4.4.2. օրենսդրությամբ սահմանված աշխատավարձի այլ հավելումները՝ գիշերային ժամերին /22:00-6:00/ և տոնական օրերին աշխատանքի համար,
 - 4.4.3. Լրացուցիչ աշխատավարձի հաշվարկումն իրականացվում է աշխատողների առանձին կատեգորիաների համար լրացուցիչ աշխատավարձերի հաշվարկման հանրագումարով, հետևյալ բանաձևի միջոցով.

$$U_L = U_{\text{Մժ}} * (\text{ԺՆ}_{\text{հերթ}} + \text{ԺՆ}_{\text{տո}}), \text{ որտեղ}$$

U_L -ը՝ Լրացուցիչ աշխատավարձի գումարն է,

$U_{\text{Մժ}}$ ՝ ծառայություն մատուցող բուժանձնակազմի ծախսը մեկ միավոր ժամանակի հաշվով, $\text{ԺՆ}_{\text{հերթ}}$ -ը՝ հերթապահության համար հաշվարկված տարեկան հերթապահության ժամանակի նորման է,

$\text{ԺՆ}_{\text{տո}}$ ՝ տոների և հիշատակի օրերի համար հաշվարկված տարեկան ժամանակի նորման է:

- 4.5. Միավոր ծառայության համար աշխատուժի ծախսը որոշվում է ըստ հիմնական բժշկական ստորաբաժանումների միավոր ծառայություն մատուցող բուժանձնակազմի (բժշկի, բուժքրոջ, սանիտարի) տարեկան աշխատուժի մեկ մահճակալ օրվա ծախսի և ծառայության մատուցման ընթացքում տրամադրված խորհրդատվության քանակից ելնելով, հետևյալ բանաձևի միջոցով.

$$U_{\text{ՄԾ}} = U_{\text{ՄՅ/Օր}} * \text{Ն}_{\text{ՄՅ}} + U_{\text{ՄԽ}}, \text{ որտեղ}$$

$U_{\text{ՄԾ}}$ ՝ միավոր ծառայության աշխատուժի ծախսն է,

$U_{\text{ՄՅ/Օր}}$ ՝ մեկ մահճակալ օրվա աշխատուժի ծախսն է, ըստ հիմնական և լրացուցիչ աշխատավարձերի հանրագումարի և մահճակալների զբաղվածության պլանային ցուցանիշի,

U_{US} ՝ ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված հիվանդությունների բուժման միջին տևողությունն է,

U_{US} ՝ ծառայության մատուցման ընթացքում մասնագիտացված խորհրդատվության համար աշխատուժի ծախսն է:

4.5.1. Մեկ մահճակալ օրվա համար աշխատուժի ծախսը հաշվարկվում է ըստ բուժանձնակազմի կատեգորիաների (բժիշկ, բուժքույր, սանիտար) հիմնական և լրացուցիչ աշխատավարձի հիման վրա, հետևյալ բանաձևի միջոցով.

$$U_{1 \text{ մ/օր}} = (U_{\text{US}} * \Phi_{\text{US}}) / (U_{\text{U}} * U_{\text{N}}), \text{ որտեղ}$$

$U_{1 \text{ մ/օր}}$ ՝ մեկ մահճակալ/օրվան ընկնող աշխատուժի ծախսն է ըստ աշխատողների առանձին կատեգորիաների,

U_{US} ՝ միավոր ծառայության տարեկան հիմնական և լրացուցիչ աշխատավարձի գումարն է ըստ աշխատողների առանձին կատեգորիաների,

U_{U} ՝ մեկ լրիվ աշխատաժամանակով աշխատող աշխատակցի կողմից մահճակալների սպասարկման նորմատիվն է,

U_{N} ՝ մեկ մահճակալի տարեկան պլանային նորմատիվային զբաղվածությունն է օրերով:

4.5.2. Միավոր ծառայության գործակիցը հաշվարկվում է հիմնական բժշկական ստորաբաժանումների, այդ թվում ընդունարանի, վերակենդանացման բաժանմունքի ընդհանուր ծառայությունների քանակում միավոր ծառայության չափաբաժնի հաշվարկման հիման վրա, հետևյալ բանաձևի միջոցով.

$$\Phi_{\text{US}} = \text{ԾՔ} / \Sigma \text{Ք}^{(1+n)}, \text{ որտեղ}$$

Φ_{US} ՝ միավոր ծառայության գործակիցն է,

ԾՔ ՝ տվյալ ծառայության դեպքերի քանակն է,

$\Sigma \text{Ք}^{(1+n)}$ ՝ հիմնական բժշկական ստորաբաժանումների կողմից մատուցված ընդհանուր ծառայությունների քանակն է:

5. Բժշկական հիմնական միջոցների (բուժման ընթացքում անմիջականորեն կիրառվող սարքավորումների և գործիքների) և գույքի ամորտիզացիա, տեխնիկական սպասարկման ծախսերի հաշվարկ

5.1. Բարդ և թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ ծառայությունների համար սարքավորումների և գործիքների ամորտիզացիա և տեխնիկական սպասարկման ծախսերը հաշվարկվում են ելնելով տվյալ հիմնական միջոցի հաշվեկշիռային կամ շուկայական գնից (կարելի է համադրել մի քանի մատակարարների կողմից առաջարկված գներ), օգտակար գործողության ժամկետից և տվյալ ծառայության վրա սարքավորման օգտագործման նորմատիվային ժամանակից, կամ տվյալ սարքի միջոցով տարեկան կատարվող ծառայությունների քանակից:

Սամ.=Ամ տար/ Ք տարեկ. , որտեղ

Սամ.` ամորտիզացիա և նորոգման ու տեխնիկական սպասարկման ծախսեր,

Ամ տար` ելնելով օգտակար գործողության ժամկետից սարքի տարեկան ամորտիզացիան է, Ք տարեկ` տվյալ սարքի միջոցով կատարվող տարեկան ծառայությունների քանակն է:

5.2. Բարդ և թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ ծառայություններում կիրառվող սարքավորումների և գործիքների ընթացիկ նորոգման և տեխնիկական սպասարկման համար նախատեսված տարեկան ծախսը սահմանվում է 5-ից 8 տոկոս: Այդ ծախսատեսակը միավոր ծառայության ծախսի հաշվարկի ժամանակ գումարվում է սարքի տարեկան ամորտիզացիային` մաշվածության գումարին:

5.3. Հիվանդանոցային բաժանմունքում առկա հիմնական միջոցների և փափուկ գույքի ամորտիզացիա և տեխնիկական սպասարկման ծախսերը, որոնք անմիջականորեն կապված են հիվանդի անցկացրած մահճակալ-օրերի հետ (օրինակ` հիվանդասենյակի գույքը` մահճակալ, սարքավորումներ, փափուկ գույքը և այլն) հաշվառվում են առանձին և տվյալ մաշվածության ծախսերը միացվում մեկ մահճակալ-օրվա ծախսերին: Այդ նպատակով տարեկան մահճակալ-օրերի թվից հանվում է այն օրերի թիվը, երբ սանիտարական/տեխնիկական սպասարկման պատճառով մահճակալը չի գործելու: Ելնելով գնից, գույքի օգտակար ծառայության ժամկետից և մահճակալների տարեկան գործողության օրերի թվից հաշվարկվում է մեկ մահճակալ օրվա համար մաշվածությունը:

5.4. Եթե առանձին լաբորատոր և գործիքային հետազոտությունների ծախսերում հաշվարկված չէ սարքավորումների, գործիքների ամորտիզացիան և նորոգման ու տեխնիկական սպասարկման ծախսերը, ապա ստացիոնար պայմաններում

հիվանդության բուժման գինը հաշվարկելիս նշված ծախսերը դիտարկվում է որպես անուղղակի (վերադիր) ծախս և միավոր ծառայության գնում հաշվարկվում անուղղակի (վերադիր) ծախսերի գործակցի միջոցով:

6. Դեղորայքի, բժշկական նշանակության նյութերի և պարագաների ծախսերի հաշվարկ
- 6.1. Ըստ ծառայության առանձին տեսակի անհրաժեշտ դեղորայքի, նյութերի և պարագաների ծախսը հաշվարկվում է նախապես սահմանված նյութերի, պարագաների ու դեղորայքի հիմնական (յուրահատուկ) և լրացուցիչ (սիմպտոմատիկ/ոչ յուրահատուկ) ցանկերի համաձայն, ըստ միավորի համար նշված նորմատիվային քանակի և գործող գնի:
- 6.1.1. Նյութերի, պարագաների ու դեղորայքի հիմնական (յուրահատուկ) ցանկում ընդգրկվում են տվյալ հիվանդության բուժման գործընթացում օգտագործվող յուրահատուկ (սպեցիֆիկ) նյութեր, պարագաներ ու դեղորայք:
- 6.1.2. Նյութերի, պարագաների ու դեղորայքի լրացուցիչ (սիմպտոմատիկ/ոչ յուրահատուկ) ցանկում ընդգրկվում են առանձին/ուղեկցող հիվանդության կամ հիվանդությունների խմբի բուժման գործընթացում օգտագործվող լրացուցիչ (սիմպտոմատիկ/ոչ յուրահատուկ) նյութեր, պարագաներ ու դեղորայք:
- 6.2. Գների որոշման համար հիմք է հանդիսանում մեկից ավելի մատակարարներից ստացված գնացուցակների համադրման արդյունքում ընտրված համեմատաբար ցածր գինը, կամ դրանց միջինացված գները կամ մեծածախ շուկայական միջինացված գները: Նշված ծախսը որոշվում է հետևյալ բանաձևի միջոցով.

$$\text{Դեղ, նյութ} = \text{Դ նորմ} * \text{Գին միավ.} + \text{Ն նորմ} * \text{Գին միավ.}, \text{ որտեղ}$$

Դեղ, նյութ՝ միավոր ծառայության դեղորայքի և նյութերի, պարագաների ծախսն է ըստ առանձին տեսակների,

Դ նորմ՝ ըստ առանձին տեսակների դեղորայքի ծախսն է մեկ միավոր ծառայության համար ըստ նորմատիվի,

Ն նորմ՝ ըստ առանձին տեսակների նյութերի, պարագաների ծախսն է մեկ միավոր ծառայության համար համաձայն նորմատիվի,

Գին միավ.՝ դեղորայքի, նյութերի, պարագաների միավորի գինն է:

7. Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ

7.1. Հիվանդանոցում բուժման համար անհրաժեշտ լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների ծախսը հաշվարկվում է կամ ըստ առանձին ախտորոշումների, կամ, ելնելով նույնատիպ բուժման մոտեցումներից և տեխնոլոգիաներից՝ ըստ հիվանդությունների (կլինիկա-ծախսային) խմբերի՝ հիմք ընդունելով հիվանդությունների միջազգային դասակարգման 10-րդ վերանայման (ՀՄԴ-10) ախտորոշումներից, հետևյալ բանաձևով.

$$L_{\Sigma} = \sum_{(1+n)} (L_{<} * L_{\text{գին միավ}}), \text{ որտեղ}$$

L_{Σ} ՝ լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների միավոր ծառայության ծախսն է,

$L_{<}$ ՝ լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների քանակն է ըստ տեսակների,

$L_{\text{գին միավ}}$ ՝ լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների գինն է ըստ տեսակների:

7.2. Հիվանդության/վիճակի վարման համալիր բժշկական ծառայության մեջ յուրաքանչյուր ախտորոշման ծառայության ծախսը հաշվի է առնվում առանձին-առանձին՝ ելնելով ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված պետպատվերի գնացուցակի գներից, իսկ դրանց բացակայության դեպքում՝ առանձին բժշկական կազմակերպություններում տվյալ հետազոտությունների համար սահմանված վճարովի ծառայությունների միջինացված գներով:

7.3. Առաձին հետազոտությունների ինքնարժեքի հաշվարկման դեպքում ելակետային ցուցանիշների հաշվարկներն իրականացվում են սույն մեթոդաբանությամբ սահմանված ծախսերի հաշվարկման սկզբունքներից ելնելով:

8. Անուղղակի ծախսերի հաշվարկը

8.1. Անուղղակի ծախսերում հաշվարկվում են բուժհաստատության հետ կապված բոլոր մնացած ծախսերը, որոնք չեն ներառվել ուղղակի ծախսերում:

8.2. Անուղղակի ծախսերին են դասվում մասնավորապես.

8.2.1. վարչա-տնտեսական և սպասարկող անձնակազմի աշխատավարձը և դրա հետ ուղղակիորեն կապված այլ ծախսերը,

8.2.2. կոմունալ և կապի ծառայությունների վճարները,

- 8.2.3. տնտեսական ծախսերը՝ ընթացիկ տնտեսական նպատակների համար նյութեր, իրեր և այլն (բացառությամբ այն ծախսերի, որոնք հաշվի են առնվել ուղղակի ծախսերը հաշվարկելիս),
- 8.2.4. գործուղումների և ծառայողական ուղևորությունների ծախսերը,
- 8.2.5. սպասարկման ծառայությունների վրա կատարված ծախսերը,
- 8.2.6. տարածքի և ոչ բժշկական սարքավորումների, հիմնական միջոցների ընթացիկ նորոգում, անմիջականորեն ծառայության հետ չկապված փափուկ գույքի, հիմնական միջոցների (շենքի, շինություն, վարչական գույքի) մաշվածություն,
- 8.2.7. սանիտարական և հակահրդեհային նորմերի պահպանման ծախսեր,
- 8.2.8. պետական տուրքեր, հարկեր և այլն:
- 8.3. Որպես անուղղակի ծախս հաշվի չեն առնվում հետևյալ ծախսերը.
 - 8.3.1. սարքավորումների և այլ հիմնական միջոցների ձեռք բերման վրա կատարված ծախսերը,
 - 8.3.2. կապիտալ ներդրումները,
 - 8.3.3. վարձակալության տրված տարածքների մասով շենքի ամրոտիզացիոն գումարները,
 - 8.3.4. շահութահարկը և եկամտային հարկը,
 - 8.3.5. պարտավորությունները չկատարելու համար վճարված տույժերը, տուգանքները:
- 8.4. Մեկ միավոր ծառայության հաշվով անուղղակի (վերադիր) ծախսը հաշվարկվում է անուղղակի ծախսերի բաշխման գործակցի միջոցով՝ ըստ բժշկական անձնակազմի աշխատավարձի, հետևյալ բանաձևով.

$$\text{Ծ}_u = \text{Ա}_{\text{Ծ}} * \text{Գ}_u, \text{ որտեղ}$$

Ծ_u՝ միավոր ծառայության անուղղակի ծախսն է,

Ա_Ծ՝ միավոր ծառայության աշխատուժի ծախսն է,

Գ_u՝ անուղղակի ծախսերի բաշխման գործակիցը:

- 8.4.1. Մեկ միավոր ծառայության հաշվով անուղղակի (վերադիր) ծախսերի բաշխման գործակիցը հաշվարկվում է ըստ բժշկական անձնակազմի աշխատավարձի, հետևյալ բանաձևով.

$$\text{Գ}_u = \text{Ը}_u / \text{Ա}_{\text{Ծ}}, \text{ որտեղ}$$

Գ_u՝ անուղղակի ծախսերի բաշխման գործակից,

Ըստ մեկ տարվա ընթացքում կատարված ընդամենը անուղղակի ծախսի հանրագումար՝ ըստ ծախսերի բաղադրամասերի ուղիղ հաշվարկով,

Աժ՝ ընդամենը բուժանձնակազմին հատկացված հիմնական և լրացուցիչ աշխատավարձի ֆոնդ:

9. Ծառայության ծախս/ինքնարժեք

Ծառայության ինքնարժեքը որոշվում է ծառայության ուղղակի ծախսերի և անուղղակի ծախսերի հանրագումարով, հետևյալ բանաձևով՝

$$Ի = Ծ_{ու} + Ծ_{ա}, \text{ որտեղ}$$

Ի՝ միավոր ծառայության ինքնարժեքն է,

Ծ_{ու}՝ միավոր ծառայության ուղղակի ծախսն է,

Ծ_ա՝ միավոր ծառայության անուղղակի (վերադիր) ծախսն է:

10. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԻՆ

10.1. Բժշկական ծառայության գինը որոշվում է ծառայության ինքնարժեքի և չնախատեսված ծախսերի հանրագումարով, հետևյալ բանաձևի միջոցով.

$$\text{Ծգին} = Ի + Ծ_2, \text{ որտեղ}$$

Ծգին - մեկ միավոր ծառայության գինն է,

Ի – միավոր ծառայության ինքնարժեքն է,

Ծ₂ – չնախատեսված ծախսերի համար հաշվարկված մեծությունն է (Ծ₂*Ի):

10.2. Պետության կողմից փոխհատուցվող ծառայությունների համար չնախատեսված ծախսերը հաշվարկվում են հիմք ընդունելով ոչ բժշկական և բժշկական այլ ծախսերի հանրագումարները, որոնք հաշվի են առնում բժշկական ծառայությունների մատուցման և սպասարկման վրա ազդող հատուկ (բժշկական ծառայության առանձնահատկություններ, բժշկական կազմակերպության առանձնահատկություններ) պայմանները:

10.3. Չնախատեսված ծախսերի սահմանային չափերն ընդունվում են ըստ բժշկական ծառայության բնույթի՝ թերապևտիկ և վիրաբուժական ծառայությունների համար համապատասխանաբար սահմանելով մինչև 6 և 10 տոկոս: